

Հ Ր Ա Մ Ա Ն N 223-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«18» ՀՈՒՆԻՍԻ 2020 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի N 808-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 704-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման գործընթացի իրականացման նպատակով ստեղծել հանձնաժողով՝ (այսուհետ՝ Հանձնաժողով) հետևյալ կազմով.

Սրբուհի Գայյան	Արդարադատության նախարարի տեղակալ, (Հանձնաժողովի նախագահ)
Լուսինե Մարտիրոսյան	Հանձնաժողովի անդամներ՝ Արդարադատության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ-մամուլի քարտուղար
Կլարա Գասպարյան	Արդարադատության նախարարի տեղակալի օգնական
Եփրեմ Կարապետյան	Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության փորձագետ
Մարիամ Գալստյան	Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար, հակակոռուպցիոն քաղաքականության մշակման

և մոնիթորինգի վարչության պետի
պարտականությունները ժամանակավոր
կատարող
(Հանձնաժողովի քարտուղար):

2. Հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի N 808-Ն որոշմամբ սահմանված կարգով կազմակերպել հասարակական կազմակերպությունների ներգրավման գործընթացը:

6/22/2020

X



Rustam Badasyan

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ